և տեսաք՝ ժողովեալ էին ի գիշերիս զնմանիս իւրեանց և բան եղեալ զի կռվեսցին ևեթ ևեթ, եւ ինքեանք մտեալ յանկիւն մի եւ փսփսային, եւ դարձեալ առաքէին յայս կոյս եւ յայն կոյս մարդ ժողովել, եւ եւս յայլ եկեղեցոյ ևս ջանայր բերել Էսիլն, որ եւ եղեւն իսկ։ Եւ ի մէջ իւրեանց դնեն աթոռակալ և երէցփոխան և այլ ինչ, և որք կային ի մէնջ՝ ասէին երիցանց թէ Դուք զխաղաղութիւն ջանամք ասէք, ո՞ւր է, այս քանի՞ չարութիւն երևի ի ձէնջ. և ասեն ժողովելոցն[1]). Զի թէ նոքա կռվին ընդ մեզ, մի՛ արգելուք զձեռս ձեր, այլ ծեծեցէք զնոսա. զի մի քանի տուրկէր բերեալ էին Ղալֆան եւ Տէր Խաչատուրն, որպէս զի դիպին ընդ իրեարս եւ ի գալն սուպաչուն տացեն ի մէնջ ի ձեռս նորա։ Եւ յետ պահու եկեալ եղեւ սուպաչին եւ նստաւ յեկեղեցին, եւ Տէր Ոսկանն զերեսն ցցուց, Սահակն զմօրուսն ցցուց, անչնորհք բանք զի ասէր, յո՛ր կողմանց. բայց նոցա այն էր խորհուրդ, զի այսու կռվօք զզուեսցին մերայինք և թողցեն զի նոքա կալցեն. քանզի աւուրքք միով և երկոքիւ և չաբաթիւ նոքա թողէին զբան և զգործս իւրեանց և յայս ընթանային. եղեն խայտառակ ամենայն աշխարհի այսու ամենայնիւ։ Եւ ելեալ երթային առ Առաջնորդն եւ ասէին. Դու չես խօսիր, զի՞ է գործք աշխարհականաց որ զերէց ծեծեն. եւ նա ձայնեալ զիւրն համախոհ՝ դնէ առ սոսա երթալ առ Խոճա Տաւութն գանկատ թէ Ֆէթվայ[2]) ունիմք վասն այսմ, դուք հախէն կու գա՞յք՝ թէ մեք երթամք զմեր բանն տեսանեմք. յետ բազում խօսից եւ նա գիտացեալ զսոսա ասէ. Դուք գիտէք։ Եւ անտի ելեալ գնան մօտ առ Խանճի Սէֆէրն ասել զնոյն. և նա ասէ. Դուք ի սուպաչին էք անկեր և ես ձեր մէջն չեմ

1) ժողցն. 2) ֆէթֆայ.